

087.1  
c-96

Լ. ԱՅՈԿԱՄՄԵՐ. Դ. ՀԵՌԻԵՆԲՈՎ.


# ՔԱՂԱՔՈՒՄ



ԱԶՈՒ-ԱԵՎԾՈՎԵԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ 1934

087-1  
6-96

Ե. ՇՏՈԿԱՄՄԵՐ, Գ. ՀԵՂԻՆՔ ՊՅԱ, JUN 2009



# ՔԱՂԱՔՈՒՄ

Փախադրեց, ԱՍՏՂԱԿ ՊՈՏԵՆՑ



ԱԶՐՎ-ԱՆՎԾՈՎՑԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՐՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ  
ԱՊՍՏՈԼ-ԴՈՆ — 1934

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

|                                                       |    |
|-------------------------------------------------------|----|
| Կոշիկի ճանապարհորդությունը . . . . .                  | 3  |
| Կույսը փոքր ե . . . . .                               | 3  |
| Ինչպես ե ստացվում կաշին . . . . .                     | 4  |
| Մեքենան . . . . .                                     | 5  |
| Փայտե վտարի վրա . . . . .                             | 6  |
| Ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ . . . . .                                 | 7  |
| Արդուկներ, վորոնցով արդուկում են ներբանները . . . . . | 9  |
| Դերձակ . . . . .                                      | 10 |
| Ինչպես են թուղթ պատրաստում . . . . .                  | 16 |
| Կալից պատրաստած գրքեր . . . . .                       | 17 |
| Թղթի գործարանում . . . . .                            | 18 |
| Հացի փուռը՝ հսկան . . . . .                           | 20 |
| Պահածոներ . . . . .                                   | 23 |
| Բարձրանում ե տունը . . . . .                          | 27 |
| Անախտ մորաքրոջ մասին . . . . .                        | 32 |
| Իմ բնակարանում . . . . .                              | 35 |
| Քաղաքը կանաչ ողակում . . . . .                        | 38 |



Отв. ред. Г. А. Потенц

Сдано в набор 19/IX-1934 г.

Издание 485/4063

Статформат Б6 125x176

Уполномоченный Б-6308

Тех. ред. О. Тер-Давыдов

Подписано в печать 4/X 1934 г.

Об'ем 1,25 печ. листа

Заказ 4705

Тираж 1500 экз.

Типография им. "Стачки 1902 года" АЧПТ в г. Ростове на Дону

Կ 2784.63

## ԿՈՇԻԿԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

## ԿՈՒՅԾԸ ՓՈՔՐ Ե

Հոկտեմբերի կները գնացին քաղաքից դուրս զբունելու։ Նրանք ճանապարհին ուրախ յերգում ելին։ Գրիգորը հանկարծ ընդհատեց յերգը.

— Սեղա, — կանչեց նա առաջնորդին, — ի՞նչու յե Ստեփանն ընկնում վոտքերիս տակ։ Խանգարում ե քայլել։

— Ցես մեղավոր չեմ, — հեծկլտաց Ստեփանը, — յես բոլորովին մեղք չունեմ, վոր խանգարում եմ։ Կոշիկներիս միջի մեխերն են խանգարում։

— Հանիքը կոշիկներդ և բորբկ գնա։ Ստեփանը լսեց առաջնորդի խորհուրդը և կոշիկները հանեց։ Գնում ե և ծիծաղում։

— Լավ ե, — ասում ե, — ճանապարհը տա-աք ե, փառափուկ ե։ Հոպ, հոպ, փոշի յե բարձրանում։

Հասան պուրակը՝ Նստեցին խոտերի վրա։ Բոլորը կոշիկներավ են, իսկ Ստեփանը բորբկ՝ խաղացնում ե վոտքի վարդագույն մատները։

— Լավ ե, — ասում ե, — ողը մաքուր ե, մատներին արանքով քամի յե խաղում։

— Ցես ել կհանեմ կոշիկներս, — ասաց Կիման։

— Յես էլ, յես էլ,—գոչեցին շրդ ողակի հոկտեմբերիկները: Նրանք հանեցին կոշիկները և կույտ կազմեցին:

— Փոքր ե կույտը,—բացականչեցին հոկտեմբերիկները և բոլորն ել հանեցին կոշիկները:

— Ո՞յ, ո՞յ, ո՞յ, ես ինչքան շատ են կոշիկները,—դարձացավ Ստեփանը:

— Միթե այս շատ ե,—ասաց շրդ ողակի առաջնորդ Գրիգորը: Անա մեզ մոտ՝ ընկ. Միկոյանի անվան կոշիկի գործարանում, վորտեղ հայրիկս ե աշխատում, իսկապես վոր շատ ե:

— Ի՞նչքան ե շատ,—ճարցրին հոկտեմբերիկները,—դու յերեխ չգիտե՞ս ել:

— Վոչ, գիտե՞մ, ամբողջ գործարանն եմ ճանաչում: Յես մայրիկս հետ եքսկուրսիա յեմ գնացել ե դիտել եմ գործարանը: Գործարանն ամեն որ բաց ե թողնում 16 հազար զույգ կոշիկ:

— Ո՞յ, ո՞յ, ո՞յ,—զարձացան հոկտեմբերիկները,

— Գրիգոր, իսկ դու կարող ես արդյոք գործարանի մասին բոլորը պատմել, ինչ վոր գիտես, — ճարցրեց առաջնորդը:

— Կարող եմ:

— Դե պատմիր:

## ԻՆՉՊԵՍ Ե ՍՏԱՑՎՈՒՄ ԿԱՇԻՆ.

Գրիգորը մատով ցույց տվեց:  
— Ահա գալիս ե կովը:  
— Դու վոչ թե կովի, այլ կոշիկների մասին պատմիր:  
— Յերբ այդ կովը մորթում են, — անվրդով շարունակեց Գրիգորը, — միսը գործածվում ե ու-

տելու, յեղյուրները՝ սանրի, իսկ կաշին ել ուղարկվում ե կաշվեգործարան վերամշակվելու համար: Գործարանում կաշին մաքրում են, քերում, ներկում, չորացնում, կտրում և, վերջապես, ուղարկում են կոշիկի գործարանը:

## ՄԵՔԵՆԱՆ

Միկոյանի անվան կոշիկի գործարանում կան շատ ցեխներ: Մեկ ցեխում կտրում են ներբաններ, մյուսում ձեռում են կոշիկի յերեսացուն, յերբորդում կարում են կոշիկները:

Այն ցեխում, վորտեղ կտրում են ներբանները, կան, այդպես կոչված — կտրիչ մեքենաներ: Նրանք մի ամբողջ խոշոր կաշվից կտրատում են բազմազույզ ներբաններ:

— Իսկ կտրիչը ձեռք ել կարող ե կտրել — ճարցրեց Լեռնը:

— Յեթե կխանգարես պատմել, այն ժամանակ լեզուղ ել կկտրի:

Մյուս ցեխում աշխատում ե բարդ և մեծ «գոպակել» մեքենան: Նա ունի հազարից ավելի զանազան մասեր: Այդ մեքենան պատրաստվել ե մեր գործարաններում: Նրա վրա աշխատում են լավագույն հարվածային բանվորներ:

Յերբ «գոպակելն» սկսում ե աշխատել, նրա շրջակայքն սկսում դողալ: Հենց ինքը՝ մեքենան ել ե գողում:

— Նա յերեխ տան նման մեծ ե, — ասաց Կոստյան, վոչ, ինչպես շոգեկառք, — նրա հետ չհամաձայնվեց Լեռնը:

— Վոչ տուն և վոչ ել շոգեկառք-ասաց Գրի-

գորը, — այլ բարձր և նեղ՝ ինչպես այս դործարանի ամենասովորական մեքենաներից մեկը:

Յեկ Գրիգորը գետնի վրա մատով նկարեց «դուպպել» մեքենան:

— Իսկ ի՞նչ են անում նրա վրա, — հարցրեց Կարենը:

Նրա վրա կատարում են աշխատանքի ամենագլխավոր մասը՝ կպցնում են ներքանը: Առանց ներքանի ման գալ չի կարելի: Այդ մինույն ե, թե առանց կոշիկի քայլես:

— Իսկ առանց կոշիկի՝ միենույն ե, թե բորիկ լինես, — ասաց Լևոնը:

— Մի, Լևոն, Լևոն: Ո՞վ այդ չգիտե: Յեկ տղաները թույլ չափեցին, վոր Կարլենը խոսքը վերջացնի: Նրանք սկսեցին սուլել և պահանջեցին, վորպեսզի Գրիգորը շարունակի բարդ մեքենայի մասին պատմել:

Յեկ Գրիգորը շարունակեց:

— Մեքենայի մեջ կան հատուկ ասեղներ: Նրանք ականջներ խլացնող կտկտոցով թռչում են վեր ու վար և կարում ներքանը:

## ՓԱՅՏԵ ՎՈՏՔԻ ՎՐԱ

— Այն ժամանակ, յերբ ներքեռմ մեքենաները կարում են ներքանները, վերևում 400 ձեւարաններ սուր դանակներով ձևում են կոշիկի յերեսացույի զանազան մասեր: Ի՞նչ բան է կոշիկի յերեսացու, Լևոն:

— Այդ կոշիկի վերեի մասն ե, վորը թելով կապում են:

— Ճիշտ ե: Կոշիկի յերեսացուն վերեից, իսկ ներքանը ներքելից մեջտեղում իրար հանդիպում են կարի բաժանմունքում: Այնտեղ մեքենաները կոշիկի յե-

րեսացուները կարելով, հազցնում են նրանց փայտե վոտքերի՝ կաղապարների վրա: Վերջինիս վրա ներբանին կարում են յերեսացուն և կրունկը կպցնում: Հետո հանում են կաղապարը, մաքրում են կոշիկը և դնում տուփի մեջ:

Այդ բոլորն անում են մեքենաները: Յուրաքանչյուր կոշիկն անցնում է 180 մեքենայի միջով: Մեքենաները կարում են, հավասարեցնում, ներկում և չորացնում: Նրանք կոշիկի յերեսացուն հազցնում են կաղապարի վրա, կարում են ներքանը և կրունկը խփում:

— Իսկ մարդիկ ի՞նչ են անում, — հարցրեց Լևոնը:

— Իսկ մարդիկ զեկավարում են մեքենաները:

Հոկտեմբերիկները նայեցին իրենց կոշիկների կույտին, իսկ Լևոնն ասաց:

— Քանի մարդու ձեռքով ե անցնում մի կոշիկը:



— Յեկ Միկոյանի անվան կոշիկի գործարանում դեռ շատ մեքենաներ կան, — ավելացրեց Գրիգորը: Գործարանում կա նաև այսպիսի մի մեքենա — «անկեպ»: Ո՞հ, ինչպես նա ուժեղ է աղմկում: Յես սկզբում վախեցա նույնիսկ: Հետո վոչի՞նչ:

Գործարանում կան շատ մեծ ցեխեր: Մի ծայրից մյուսը գնալու համար, հինգ բոպե յե պահանջվում: Ահա թե ի՞նչ նսկայական են: Իսկ այդ «անկեպները» այնպես ուժեղ են աղմկում, վոր ցեխի մյուս ծայրում խլացնում են ականջներդ: Այսպես ել լսվում ե.

— Ժ՝ ժ՝ ժ՝ ժ՝ ժ՝ ժ՝ ...

«Անկեպների» վրա կրունկները հղկում են, վարպեսզի նրանք խորդ ու բորդ չլինեն և փայլեն: «Ան-

կլեաները» դանվում են պառատակավոր ցեխում: Բոլոր ցեխերի միջից անցկացրված ե յերկաթգծեր, փորոնց վրայով զլորվում են վագոնիկները: Յեվ ինչքան շատ են: Հավանական ե հարյուր: Յեվ նրանք բոլորն ել բաժանված են վանդակների: Իսկ ամեն մի վանդակում մի կոշիկԱյդպիսի վագոնիկներն իրենց հետ կոշիկներ են տանում: Յերբ վագոնիկը մոտենում է «անկյեպին», բանվորն անմիջապես վանդակից վերցնում է կոշիկը և սկսում է նրա կրունկը հըղել:

— Այնտեղ հավանական ե, — ասաց Լեոնը, — և շոգեկառքեր, և՝ կայարաններ կան:

— Դու գեռ փոքր ես, — պատասխանեց Գրիգորը, և վոչինչ չգիտես: Այնտեղ վոչ մի կայարան չկա, ինչպես նաև շոգեկառքեր:

— Իսկ ի՞նչպես են վագոններն առանց շոգեկառքերի գնում, — հարցրեց Լեոնը:

— Գնում են, ելի: Յեխի վերեկ մասում, առաստաղի տակ, փայտե անակ ե շինված: Այնտեղ կան զանազան լծակներ:

Յեթե լծակներից մեկը պտտես, բոլոր տեղերում լույսերը կհանգչեն:

Ֆերկորդը պտտես, մեքենաները կկանգնեն:

Յերբորդը պտտես, վագոնիկները յերկաթգծերի վրայով կդնան:

Ամեն տեղ ելեքտրականություն կա: Վագոնիկների տակ, յերկաթգծերի կողքով ձգված ե յերկար շղթա: Նա կոչվում է թրթուր, վորովիճակ նա սողում է իսկական թրթուրի պես: Հենց այդ թրթուրն ե, վոր վագոնիկներին ոգնում ե շարժվել:

Այդպես են ճանապարհորդում կոշիկները վագոնիկներով մեկ բանվորից անցնելով մյուսին:

Իսկ հետո զալիս ե բեռնատար ավտոն, ֆրթֆրթացնում ե այրվող բենզինը և կոշիկները տանում ե խանութները: Սհա և կոշիկների ամբողջ ճանապարհորդությունը:

— Վ՛չ, գեռ բոլորը չե, — ասաց Կոլյան: Հայրս ինձ պատմել ե արդուկների մասին, վորոնք արդուկում են ներբանները: Յեթե ուղում եք, յես ձեզ կպատմեմ:

— Իհարկե, ուղում ենք: Պատմիր, Կոլյա, — խընդեցին տղաները:

ԱՐԴՈՒԿՆԵՐ, ՎՈՐՈՆՑՈՎ ԱՐԴՈՒԿՈՒՄ ԵՆ ՆԵՐԲԱՆՆԵՐԸ

Ահա թե ինչ պատմեց Կոլյան.

— «Հարթիչ» մեքենայի վրա ամբացրված են յերկու մեծ ծանր հղկիչներ: Այնպես ծանր են, վոր նրանց յերկու ձեռքով բարձրացնել անգամ չես կարող: Մեքենան պտտեցնում են հղկիչները, իսկ նրանք ել զլորվում են ներբանների վրայով, նայում ես և ներբաններն արգեն արդուկված ու հարթված են:

— Իսկ ի՞նչպես են կոչվում այդ հղկիչները, — հարցրեց Ստեփանը:

— Այդ հղկիչները կոչվում են «արդուկներ»:

— Արդուկներ, — ընդհատեց Կիման: Գիտեմ, գիտեմ: Այդ հավանական ե, այնպիսի արդուկներ են, ինչպես մերը: Յերեկոյան մայրիկն արդուկում եր:

— Ներբանը, — հարցրեց Լեոնը:

— Վ՛չ, վոչ թե ներբանը, այլ իմ շորը: Արդուկում եր արդուկում և հանկարծ տեսնում ե շորի վրա մի ծակ:

— Այդ արդուկները բոլորովին ել ձերի նման չեն, վորով մայրիկը արդուկում եր շորդ, — նեղացավ Կոլյան, — այլ բոլորովին ուրիշ տեսակ են:

— Ինչպիսի՞ն ե, դու գիտե՞ս:

— Գիտե՞մ:

— Ասան:

— Զեմ ասի, յերբ դուք ինձ ընդհատում եք:

— Դե, ասա, — խնդրեցին տղաները:

— Նրանք բոլորովին ել արդուկի նման չեն: Նրանք սուր ծայրով չեն և նույնիսկ չեն տաքանում: Ինչքան ուզում ես նրանց ձեռք տուր — ձեռքերդ չեն տաքանաւ: Նրանք սառը կերպով սահում են ներբան-ների վրայով և ուժեղ սեղմում նրանց: Դրանից ել ներբանն արդուկվում և հղկվում ե:

\* \* \*

Կոլյան ուզում եր ելի պատմել: թե ինչպես գործարանում նա մի անգամ փորձեց սեղմել լծակը, բայց ժամանակ չեղավ:

— Ժամանակին ե շարժվելու, — ասաց առաջնորդը:  
Բոլորն ել կոշիկները հագան և ուրախ յերգելով  
վերադարձան տուն:

## ՊԵՐՁԱԿ

Մենք նրան ամեն որ տեսնում եյինք: Նա փողոցով շատ արագ եր քայլում: Թթի վրա փայլում եյին ակնոցները: Մենք գիտեյինք, վոր նրա աչքերը փշացել են անքուն զիշերներից: Մենք գիտեյինք, վոր նա կուզիկացիլ եր ամբողջ որով կարի մեքենայի մոտ նըտած լինելու շնորհիվ:

Նա գերձակ եր: Կարում եր մահուդե կոստյումներ, զգեստներ, սպիտակեղեն, տրուսիկներ:

Բակում մենք ձյունից կանալք եյինք ձեփում, չմշկում եյինք սառույցի վրա և հաճախ նայում եյինք.

գերձակի պատուհանից ներս: Նա շարունակ աշխատում եր: Մկրատով կտորներ ձեռում: Նա դժվարությամբ եր ասեղը թելում և կարում: Վոաքերով շարժում եր կարի մեքենան: Նա կտկտացնում և ուղիղ գծով կարում: Կոճը թելի հետ պտտվում եր: Ասեղը մանում եր կտորի մեջ և ուղիղ կարերը շարվում եյին դեռ անպատճաստ բլուզի վրա...

Մենք պատուհանից նայում եյինք և իրար ասում:

— Շատ հեշտ ե կարելլ, — ասում եր կապույտ գլխարկով Սիրանույշը: Յեսինքս կարել եմ: Յես գիտեմ:

— Դու ի՞նչ ես կարել թեղ համար շոր:

— Վոչ, յես իմ խրձիկների համար եմ հագուստ-ներ կարել նապաստակին տրուսիկ, արջուկին՝ յեռանկյունի գլխարկ, ինկ կարմիր քթով կավե տղայի համար՝ բլուզ:

— Յես կարգացել եմ, վոր մի ինչ-վոր ժամանակ մարդիկ գաղանների մորթիներ են հագել — խառնվեց խոսակցությանը Շավարշը: Այդ յեղել ե շատ վաղուց: Նույնիսկ իմ պապն այն ժամանակ ծնված չի յեղել...

— Մորթիներ եյին հագնում: Իսկ ամառը յերեկ նըտածով շոր կլիներ ման գալ, — հարցնում եր Սիրանույշը:

— Իսկ ահա Շավարշի համար շոր չե, վորովհետեւ նրա անդրավարտիկը ծակ ե:

Բոլորն ել նայեցին Շավարշին: Նրա անդրավարտիկի վրա սպիտակին եյին տալիս յերեք ծակ՝ մեկը մյուսից մեծ:

— Յես կարողեմ պատասխանել — ասաց Շավարշը ամոթից կարմրելով: Յես լինքս եմ ծակելու Այսոր ցանկապատի վրայով անցնելիս պատռեցի...

Իսկ իմ անդրավարտիկը գերձակն ե կարել: Ամբողջ որը նա կարել ե:

— Ոյ, ոյ, ոյ: Ամբողջ որն այդպիսի փոքր անդրաւարտիկ ե կարել: Իսկ դու, Միրաննոյշ, ասում ես, թե հեշտ ե կարելը... դժվար ե դերձակի համար միայնակ աշխատել:

Զե՞ վոր նա ամեն ինչ իր սեփական ձեռքերով պետք ե կատարի...

Դերձակը լսեց մեր խոսակցությունը, դուրս յեկավ բակը և ասաց:

— Այս, տղաներ, դժվար ե աշխատել: Որվաընթացքում յես կարողանում եմ միայն մի վորեվե շոր կարեր: Բայց ահա մեր քաղաքում կա կարի գործարան: Այստեղ որական կարում են վոչ թե մեկ շոր, այլ հաղարավոր շորեր և ավելի լավ, և ավելի աժան, քան՝ յես:

— Այդ չի կարող պատահել, — բացականչեց Շավարշը: Այդ միայն հեքիաթներումն ե: Հազարավոր շորեր, չե՞ վոր այդ մի ամբողջ յեռ ե:

— Գործարանը հագուստ ե մատակարարում մեր ամբողջ յերկրամասին:

Գործարանում կարում են վերաբերուներ, ըլուզներ, շորեր: Ահա դու, Շավարշ անդրավարտիկդ պատռեցիր: Այժմ մարդիկդ խանութից նորը կգնի: Այդ անդրավարտիկները կարվել են գործարանում:

\* \* \*

Մի քանի որից հետո մենք դերձակի պատուհանից նայեցինք ներս: Նա տանը չեր, Հետեյալ որը կրկին նայեցինք: Նա ելի չկար:

Դուան վրա կողպեր եր կախված: Յերեկոյան մենք դերձակին հանդիպեցինք փողոցում: Նա շատ ուրախ եր և կարծես յերիտասարդացել եր:

— Դուք արդեն դերձակություն չեք անում, — հարց-քեց Միրանույշը:

— Վո՞չ դերձակություն եմ անում: Միայն թե մեկ շորի վորսարեն, հիմա հազարն եմ կարում: Այժմ յես աշխատում եմ կարի գործարանում: Յեթե ցանկանում եք, յես ձեզ կտանեմ գործարան և շատ հետաքրքիր բաներ ցույց կտամ:

— Յանկանում ենք, իհարկե, ցանկանում ենք գնալ:

— Վաղը յես հանգստանում եմ, բայց գործարանն աշխատում ե: Գնանք վաղը:

\* \* \*

— Հետեյալ որը մենք հավաքվեցինք բակում: Բոլորն ել պատրաստ ելին: Հակոբ Միխայլովիչը (այսպէս եր դերձակի անունը) նույնպես պատրաստ եր: Ճանապարհին Հակոբ Միխայլովիչը մեզ պատմեց.

— Մոտիկ անցյալում մեր յերկրում այսպես եր. մեկը հարյուրներով շորեր ուներ, իսկ մյուսը միայն մեկը՝ այն ել պատռաված: Դերձակներն աշխատում ելին նեղ, մութ նկուղներում: Բայց անցան այն ժամանակները, յերբ հարուստները շատ հագնելու շորեր ունեյին, իսկ աղքատները վոչ մի հագնելու բան ել չունեյին:

Մեզանում, Խորհրդային Միության մեջ, բոլոր բանվորներն ու կոլխոզներները պետք ե որինակելի կոսայումներ ունենան: Յեվ այն ել վոչ թե մեկ, այլ մի քանիսը: Դրա համար ե, վոր կառուցել են այս գործարանը:

Մենք ներս մտանք գործարանի բակը: Բակում դրդացնում ելին մահուգով և չիթով բեռնված բեռնատար ավտոները:

— Գիտեք, տղաներ, վոր ձեր բլուզները և Սիրանույշի վերարկուն դաշտում ե բուսել, — ասաց Հակոբ Միխայլովիչը:

— Դուք ծիծաղում եք մեզ վրա: Մենք փոքր չենք և գիտենք, վոր բլուզները դերձակներն են կարում, իսկ դաշտում միայն հացահատիկ ե բուսնում: Այս-

— Ահա տեսնում եք, վոր դուք չգիտեք, — շաբուսակեց Հակոբ Միխայլովիչը: Այդ կտորը բերված ե մանածագործարաններից: Իսկ կտորը ջուլհակները գործել են բամբակից և կտավիատից: Կտավիատը և բամբակը դաշտում են աճում... Հասկացմք:

— Դեռ, գնանք գործարանի շենքը տեսնենք:

Մենք ներս մտանք մի մեծ, լուսավոր դահլիճ: Մեղ խլացրեց կարի մեքենաների աղմուկը:

— Հերթով սկսենք, — ասաց Հակոբ Միխայլովիչը, — ահա կանգնած են նկարիչ — դերձակները: Նրանք պատրաստում են ապագա կոստյումների ծրագիրներները: Զգտում են, վոր նրանք գեղեցիկ և հարմար լինեն:

Կոստյումները լինում են զանազան: Մի տեսակ կոստյումով գործարանում հարմար ե աշխատել, մյուսներով հաճելի յե հանգատանալ: Իսկ յերեխաների համար նկարիչը մտածում է այնպիսի կոստյումի ձև գտնել, վորպեսզի հարմար լինի սովորել, հանգստանալ և հեշտ կերպով աշխատել:

Բայտ այդ նկարների, ձեռող բաժանմունքում ստվարաթղթից կտրուռ են ձեխներ՝ թևացուներ, թիկունքացուներ, փողպատներ և թևաբերաններ: Այդ բոլոր մասերի միացումից ստացվում է կոստյում կամ վերարկու:

Բայտ ստվարաթղթի ձեխների՝ բանվորներն ելերական մկրատներով կտորից կտրում են ապագա

կոստյումի մասերը: Այդ կտորներից ել բանվորները հենց նույն դահլիճում կարում են կոստյումները: Յուրաքանչյուր բանվոր ունի իր մեքենան, իր պարականությունը:

Մեկը թևացուներն ե կարում, մյուսը փողպատները կպցնում, յերրորդը՝ միայն թիկունքը, չորրորդը՝ կոճակները: Այսպիսով, անպատրասակի բաճկոնն անցնում է ձեռքից-ձեռք, մինչև չմաքրվի և չարգուկվի:

Մյուս ցեխում անդրավարտիկներ են կարում:

Գործարանում շատ ցեխեր կան: Մենք բոլոր ցեխերն ել պատվեցինք: Ցեխերից մեկում պատրաստում են մանկական կոստյումներ: Մյուսում՝ մորթյա վզով վերարկուները, Յերրորդում՝ կանացի գեղեցիկ վերարկուները:

Գործարանն որական կարում է հազարից ավելի կոստյումներ և շորեր:

Մեքենաները շատ արագ են աշխատում: Մինչև գերձակը մեկ շոր կարի, գործարանը հազարն ե պատրաստում: Գործարանում մեքենայով կարելու գեղջում բանվորների և ժամանակակիցների մեջ ավելի քիչ վատնվում, քան գերձակինը, և կտորն ե քիչ գործածվում: Այստեղ կտորի յուրաքանչյուր անպեսք մասը գործածվում է:

Այդ պատճառով ել գործարանում պատրաստվող ամեն տեսակի արտադրանք ավելի աժան ե մինում, քան տնայնագործ գերձակի պատրաստած իրը:

\* \* \*

Մենք վերագառնալիս վիճում եյինք:

— Յես ուզում եմ բժիշկ լինել, — ասաց Աստղիկը:

— Իսկ յես ողաչու: Լավ ե թռչել ամպերում:

— Յես ուղում եմ ածխահատ դառնալ: Լավ և  
իշնել յերկը խորքը:

— Յես ել մեքենավար պիտի լինեմ:

Հակոբ Միխայլովիչը լսեց մեզ և ասաց.

— Իսկ յես դերձակ յեղել եմ, առաջվա նման ել  
դերձակ կմնամ: Յես ձեզ բոլորիդ համար ել բան-  
վորական կոստյումներ կկարեմ, վորպեսզի դուք կա-  
րողանաք աշխատել:

Ողաչույին՝ կաշվե տաք կոմբինագիրն, ածխահա-  
տին՝ բրիգենտե կոստյում, բժշկին՝ սպիտակ խալատ,  
մեքենավարին՝ մահուղե բաճկոն:

— Շատ լավ,— ասացին աղաները, — մեզ հա-  
մար կոստյումներ պատրաստեցեք: ԶԵ՞ վոր մենք շու-  
տով մեծանալու յենք:

## ԽՆԴՊԵՍ ԵՆ ԹՈՒՂԹ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սուրենը նստել եր սեղանի մոտ և կարդում եր «Գըր-  
քույկը գրքույկների մասին» հետաքրքիր պատմվածքը:

Մուշեղը փնթի  
Գիրք ուներ հին մի—  
Կեղտոտ, քըքըված,  
Կուզիկ, պատուված—  
Սկիզբ ու վերջ չկա,  
Կազմե ել մի մաշալկա...

— Շատ հետաքրքիր գրքույկ ե, — ասաց Սուրենը:  
Գրքույկը պատմում ե, թե ինչպես փնթին փշացրեց  
լավ գիրքը:

Թղթի գործարանի հին բանվոր Ռուբեն Պավլովիչը  
լսեց Սուրենին և ասաց.

— Տեսնում ես, այս գրքույկը տպված ե թղթի  
վրա: Իսկ դու գիտես, թե ինչպես են գրքույկները

պատրաստում: Ի՞նչպես են մարդիկ թուղթ հնարել:  
Ի՞նչպես են պատրաստում այն:

— Թվում ե, թե նա ծառի վրա յե աճում: Յերկի  
թղթի ծառ կա: Նրա վրա փոխանակ կանաչ տերե-  
ների, թղթի տերեներ են բուսնում:

Ռուբեն Պավլովիչը ծիծաղից թուլացավ:

— Ե՞ն, Սուրեն, դու, ինչպես յերեսում ե, թղթի  
մասին վոչինչ չգիտես: Յես քեզ բոլորը կպատմեմ՝ թե  
մարդիկ առաջներում ինչի վրա եյին գրում, ինչպես  
սովորեցին թուղթ պատրաստել, ինչպես եյին պատ-  
րաստում առաջներում և ինչպես են պատրաստում  
հիմա...

42784-63

## ԿԱՎԻՑ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԳՐՔԵՐ

— Յեղել ե մի ժամանակ, յերբ մարդը թղթի մա-  
սին գաղափար չի ունեցել: Այդ շատ վաղուց եր: Հա-  
զար տարի սրանից առաջ, թղթի փոխարեն, մարդիկ  
գրում եյին կավե տախտակների, գաղանների մորթի-  
ների և բույսերի տերեների վրա:

Եեվ այն ժամանակ նրանք գրում եյին վոչ թե  
այնպիսի տառերով, ինչպես մենք ենք գրում, այլ  
նկարներով:

Յերբ ցանկանում եյին արտահայտել, վոր բավա-  
կան ե արածացնել նախիրը, նկարում եյին կով և  
հովիկ: Ասպես ել նամակագրություն եյին ունենում:

Բայց ով ե հնարել թուղթը, վորի վրա մենք հիմա  
գրում ենք:

Թուղթը հնարել են չինացիները, սրանից յերկու  
հազար տարի առաջ:

Չինացիները յեռացող ջրի մեջ եյին դնում ծառի  
կեղեկի տակի մետաքսանման թելիկները: Ստացվում եր



թղթե խմոր։ Հետո այդ խմորը բարակացնում եյին, չորացնում և ստանում ելին սպիտակ, բարակ թղթե թերթիկներ։ Այդ տերեների վրա յել գրում եյին։

Ուրիշ յերկրներից Զինաստան եյին գալս ճանապարհորդներ։ Նրանք իմացան, թե ինչպես չինացիները կեղեկի մետաքսանման թելիկներից թուղթ են պատրաստում։ Հետագայում մարդիկ սովորեցին թուղթը պատրաստել հին լաթերից, հարդից, փայտից։

Թուղթը պատրաստելու համար սկսեցին խոշոր գործարաններ կառուցել, մեքենաներ շինել, վորպեսզի արագ և լավ թուղթ պատրաստեն։

Թղթի վրա տպվում են լրագրեր, ամսաթերթեր, գրքեր, Գրքի միջոցով մարդը սովորում է։

Առանց գրքերի չի կարելի գործարաններ կառուցել, յերկաթուղային ճանապարհներ անցկացնել, չիթ և շոգեկառք, ավտոմոբիլներ և թուշ պատրաստել։

## ՅՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Թղթի գործարանի բակում հին լրագրերի, ամսաթերթերի, գրքերի, գրած տետրակների մեծ սարեր կան։


Այդ կեղտոտ, գրած թղթերից գործարանում պատրաստելու յեն մաքուր, լավ տեսակի թուղթ, վորդի վրա կարելի յե գրել, նկարել, գրքեր և լրագրեր տպել։ Ահա այնտեղ, յերկաթգծերի վրայով, գլորվում և անպետք թղթերով բեռնված սայլակը, Գնանք նրա հետեւ և տեսնենք, թե ինչպես ե հին թղթերից լավ թուղթ ստացվում։

Սայլակը մոտեցավ տաք ջրով և գոլորշիով լցված մեծ տակառին։ Այստեղ թուղթը թրջվում և և ուռչում։

Թրջված թուղթը տակառից ուղեկորվում և դեպի, այսպես կոչված, ՌՈԼՆԵՐ մեքենան։

Ռոլի մեկ ծայրում գտնվում ե դանակներով ամրացրած գլանը։ Դանակները կտրատում են գունդգունդ յեղած թղթերը և գարձնում են թղթե խմոր։

Գունավոր թղթեր պատրաստելու դեպքում, ներկ են ավելացնում։ Յեթե այն սպիտակ ե լինում—նըրան սպիտակացնում և ուղարկում են թուղթը պատրաստող մեծ մեքենան։



Թղթի գործարան

Մեկ ծայրից մեքենայի մեջ թափվում ե նեղուկ թղթե խմորը։ Մեքենայում այդ խմորը գրղնակում են տաք կլոր գլանիկները։ Ստացվում ե յերկար, բարակ ժապավեն։ Հետո այն չորացվում, կրկին անդամ գրղնակում ե և մեքենայից վերջնականապես դուրս ե դալիս պատրաստի թղթի յերկար ժապավենը։

Այդ ժամանակ մարդկային և վոչ մի ձեռք չի կը պչում թղթին։ Մեկ կամ յերկու մարդ հանգիստ պտտ-

վում են շուրջը: Նրանց վարժված ականջները ըգ-  
դայուն կերպով ունկնդրում են մեքենաների ճախին:

Մեքենայի ծայրում գտնվող կլոր թմբուկներն  
իրենց վրա փաթաթում են կիլոմետրների յերկարու-  
թյուն ունեցող թղթեր: Որ ու գիշեր պտտվում են  
թմբուկները: Պատրաստի թուղթը կարատվում է տար-  
բեր չափերի: Նրանցից պատրաստում են տետրակ-  
ներ և բլոկնոտներ: Նրա վրա տպվում են գրքեր և  
լրագրեր:

\* \* \*

— Դէհ, ի՞նչպես ե, Սուրեն, հետաքրքի՞ր եր իմ  
պատմածը,—հարցրեց Ռուբեն Պավոսիչը.

— Յես հափշտակությամբ եյի լսում, այնքան հե-  
տաքրքիր եր: Իսկ յես կարծում եյի, վոր թուղթը  
ըսնում ե ծառի վրա:

— Դու մասամբ իրավացի յես Ծառից նույնպես  
թուղթ են պատրաստում: Լաթերից ել են պատրաստում:

Ռոստովում գտնվող Կալինինի անվան գործարանը  
անպեսք թղթերից լավ տեսակի թուղթ ե պատրաս-  
տում:

— Յես պետք ե իմ ողակի հետ միասին հավաքեմ  
անպետք թղթերը,—ասաց Սուրենը: Թող նրանից կը-  
կին մաքուր թուղթ պատրաստեն:

— Յեվ լավ ել կանես—գովարանեց Ռուբեն Պավ-  
լովիչը:

## ՀԱՅԻ ՓՈՒՌԸ — ՀՍԿԱՆ

Քաղաքում կան այնպիսի շենքեր, վորոնց մեջ  
մարդիկ չեն քնում: Այդպիսի շենքերից մեկը հանդի-  
սանում է հացի գործարանը: Վաղ առաջանակ և

մութ գիշերին այստեղ վրա յեն մարդիկ, աղմ-  
կում են մեքենաները և զիկանում են վառարանները:

Գիշերը քաղաքը քնած է: Լուսնյակը լուսավորում  
է միայն պահապաններին, վորոնք խանութների և պա-  
հետների մոտ անց ու դարձ են անում:

Բոլոր տներում մութ է: Իսկ հացի գործարանում  
պայծառ կերպով լուսավորում ե ելեկտրականությունը:

Հացի գործարանի բանվորները հոգում են վաղվա-  
մասին: Պետք ե այնքան հաց պատրաստել, վոր կարելի  
լինի կերակրել բանվորներին, կարմիր բանակային-  
ներին, գվըրցականներին:

Ահա թե ինչու հացի գործարանի բանվորները  
գիշերը չեն քնում: Ահա թե ինչու հունցող մեքենա-  
ները յերբեք կանգ չեն առնում: Այստեղ թխվում ե  
համով, լավ յեփած հաց:

Գործարանի բակում ամեն առավոտ շարք են կանգ-  
նում բեռնատար ավտոները և սայշերը: Նրանց վրա  
բեռնում են արկղների մեջ գասավորված հացը: Նա  
դեռ տաք ե և գոլորշի յե բարձրանում:

Բեռնատար ավտոներն ու սայշերը գուրս են գալիս  
բակից: Ավտոները գնում են կոոպերատիվները, հացի  
խանութները, ճաշարանները:

Մի քանի ժամից հետո զարթնում են դպրոցական-  
ները: Նրանք նախաճաշը հացով պետք ե ուտեն: Հա-  
մով ե փափուկ, թարմ հացը:

Մինչև հացը ձեր սեղանին համսնելը, նրա վրա շատ  
աշխատանք ե թափվել: Դուք գիտե՞ք արդյոք, թե ին-  
չից ե առաջացել հացը:

\* \*

Հացի պատմությունը սկսվում է դաշտից... Քա-  
մին ծածանում ե ցորենի ծովը: Վոսկեգույն ալիք-  
ները շորորվում են դաշտում:

Սովխողի բանվորները, կոլխոզնիկները հսձում են ցորենը, ծեծում և տանում են աղորիքը:

Աղորիքում ցորենից ալյուր պատրաստելով, պարկերով ուղարկում են հացի դործարանը:

Աստեղ շատ մեքենաներ կան: Պետք ե ասել, վոր մեքենաները իրենք են հացը պատրաստում, վորով հետեւ բանվորները վոչ մի անգամ իրենց ձեռքերը չեն կպցնում հացին: Բանվորները միայն ղեկավարում են մեքենաները:

Բանվորները ալյուրը լցնում են տակառների մեջ: Ալյուրն այստեղ մաղկում եւ Մաքրված ալյուրը անցնում ե տաշտանման մեքենաների մեջ: Այստեղ ալյուրը խառնվում ե ջրի հետ: Ջրի մեջ գցում են թթվամոր:

Բանվորը սեղմում ե մեքենայի կոճակը: Սեղմում ե սե կոճակը—մեքենայի յերկաթե թաթերն ալյուրը խառնում են ջրի հետ: Սեղմում ե կարմիրը՝ տաշտը թեքվում ե ցած, ցած—և խմորը թափվում ե հատուկ տակառների մեջ, վորտեղ նա հասնում, փափկանում ե:

Պատրաստի խմորն այստեղից անցնում ե խմորհունց մեքենայի մեջ: Մեքենան այստեղ հունցում, ալյուր ե ավելացնում և խառնում ե խմորը: Բանվորները սպիտակ թասակները հագած, ոգնում են այս մեքենայից պատրաստի, բայց դեռ հում բուլկիներին շարունակել իրենց ուղին: Խմորը շարունակում ե իր ճանապարհը մինչև հրաշունչ վառարանը:

Դործարանում շատ վառարաններ կան:

Նրանք սենյակի նման հակայական են: Բուլկիները միանգամից հազարներով են տեղավորվում վառարանի մեջ: Վառարանը տաքանում ե ելեկտրականությամբ: Մի քանի ժամից հետո պատրաստի յեփած բուլկի-

ներն ուղղակի տարվում են դեպի բեռնատար ավտոները և սայլերը:

Այս բուլկիներին մարդկային ձեռքեր չեն կպել: Իսկ առաջ, յերբ դեռ գործարաններ չկային, ի՞նչպես եյին թխում հացը: Այդ մասին դժվար ե նույնիսկ հիշել:

Հացի հին փոերը շատ կեղտոտ եյին և ողագուրկի: Փոերը գտնվում եյին նկուղային շենքերում, վորտեղ կային առնետներ, միներ, սարդեր:

Հացթուխները շատ ծանր պայմաններում եյին աշխատում: Դրա համար ելնրանք շատ կեղտոտ եյին: Հացթուխը ձեռքով հունցում եր խմորը. ձեռքով ել խմորը դնում եր կեղտոտ, ծխոտ վառարանում...

Ինչքան կեղտոտ բաներ եյին յեփվում հացի մեջ:

Բուրժուաները չեյին մտածում բանվորների համար լավ հաց թխել:

— Նրանք այդ ել կլափեն,—դատում եյին բուրժուաները: Զե՞ վոր մենք լավ հաց և կարկանդակ ունենք, ի՞նչու անհանգստանալ բանվորների համար:

Միայն խորհրդային իշխանությունն ե բանվորներին տալիս համեղ, մաքուր և լավ հաց:

## ՊԱՀԱՄՈՒԵՐ

Պատուհանում դրված եր արծախագույն տուփը: Նա արտացոլում եր ինչպես հայելի: Յես նայեցի տուփին և նրա մեջ տեսա տարորինակ դեմք: Նա ծամածոված եր: Քիթը յերկար, աչքերը լայն: Յես վախեցա և տուփը դրեցի իր տեղը:

— Արշավիր, ինքոդ քեզնից վախենում ես,—ասաց քույրիկս: Տուփի մեջ ինչպես հայելիում, արտացոլվել ե քո դեմքը:

— Զի կարող պատահել: Իմ քիթն ավելի քան  
գեղեցիկ եւ և աչքերս ուղիղ:

Թույրս տուփը մոտեցրեց իր գեմքին: Յեզ տուփի  
մեջ կըկին յերևաց հրեշտակին դունչը:

— Այդ տուփը—ծուռ հայելի յեւ,—ասաց քույրս:

— Վհչ, դրանք պահածոներ են,—միջամտեց մայ-  
րիկը:

Այս տուփը յերկար չմնաց պատուհանում: Մար-  
դիկն այն վերցրեց տարավ խոհանոց և նրանից կե-  
րակուր յեփեց:

Ճաշին հայրիկը յեկավ: Նա իր հետ ելի գեղեցիկ  
յառիկներով տուփեր բերեց: Մեկ տուփի վրա նկար-  
ված եր լորի: Մյուսի վրա դեղին ծիրաններ: Յեր-  
րորդի վրա՝ վարդագույն խոզ:

— Սրանք պահածոներ են,—ասաց հայրիկը:

\* \* \*

Հայրիկը գրչահատով բացեց տուփը: Մեկ տու-  
փի մեջ գտնվում եր համեղ յերկարիւանի բույսեր: Յերկրորդում՝ ծիրանի մուրաբա, իսկ յերրորդում՝  
տրորած կարտոֆիլով խոզի միս:

— Պահածոներն առաջին անգամ պատրաստել ե  
մեկ ֆրանսիացի խոհարար,—ասաց հայրիկը:—Խոհա-  
րարը լավ գիտեր, վոր ամեն մի մնունդ, ուղում յեր-  
կար մնալով կարող ե փշանալ:

Խոհարարը զբքերում կարդում եր փոքրիկ կեն-  
դանի եյակների—մանրեների մասին: Նրանք այն-  
քան փոքր են, վոր սովորական աչքով աեսնել չի կա-  
րելի: Բայց նրանք այնքան շատ են, վոր յերկրի յե-  
րեսին չես գտնի մի տեղ, վորտեղ նրանք չգտնվեն: Նրանք ապրում են ծովերի խորքերում, փոշու

պերում, ողի բարձր շերտերում և գետնի խոր ծալքե-  
րում:

Հենց այդ փոքրիկ մանրեներն են փչացնում մի-  
ուր, բորշչը, հացը, մրգերը և կանաչեղենը:

Խոհարարը մտածեց:

— Յեթե տուփի մեջ մնունդը լավ փակենք, վոր-  
տեղ բոլորովին ող չթափանցի, ապա նա, հավանա-  
կան ե, չի փշանա: Պետք ե փորձել:

Խոհարարը վերցրեց մի կտոր թարմ միս և ամուր  
փակեց կավե տուփի մեջ: Այնտեղ բոլորովին ող ը-  
մտավ:

Մի շաբաթից հետո խոհարարը տուփը բացեց և  
տեսավ, վոր միսն այնպես թարմ եր մնացել, ինչպես  
վոր զրել եր տուփի մեջ:

Ֆրանսիական խոհարարն այս ձեռվ սովորեց պա-  
հածոներ պատրաստել:

Այժմ ամբողջ աշխարհում պահածոներ են պատ-  
րաստում: Պահածոներն անփոխարինելի մնունդ են  
հանդիսանում ճանապարհորդների, եքսկուրսանտների  
և կարմիր բանակայինների համար:

Այժմ ամբողջ աշխարհում պահածոներ են ուտում:  
Յեզ հյուսիսում, վորտեղ ցուրտ և սառուցիներ են,  
և հարավում, վորտեղ շատ շոգ ե, և Կարա-Կումայի  
անապատի այրող ավազուտներում, և ովկիանոսյան  
նավերում, և Ամերիկայում ու Յեփրոպայում, մի  
խոսքով բոլոր յերկրներում և մեր մեծածավալ Մի-  
ության քաղաքներում:

Յերկաքիլանի (լոբիանման) բույսերն աճել են  
հարավային տափաստաններում, խոզերը ծնվել են  
արոտատեղիներում, ձկներն ապրել են ծովերում:

Իսկ հիմա... այդ բոլորը—պահածոների ձեռվ—  
ընկել են հյուսիս՝ ձմեռողների մոտ:

Զմեռողների տնակներում տաք եւ Նրանք փայլուն  
թիթեղյա տուփերի մեջ լավ ուտելիք ունեն:

Ճանապարհորդները, վորոնք գնում են տափաս-  
տանով, մագլցում են լեռնազագաթները ողաչունե-  
րը, վորոնք ճախրում են ամպերում, իրենց հետ պա-  
հածո տուփերում ուտելիք են վերցնում:

— Հայրիկ, — ընդհատեցի յես, — չե՞ վոր տուփերն  
ամուր փակված են: Ինչպես են նրանց մեջ պահա-  
ծո լցնում:

Յեվ հայրիկը բացատրեց.

— ԽՍՀՄ-ում կան հարյուրավոր պահածոների  
գործարաններ: Մեր յերկրամասում՝ Կրիմսկայա ստա-  
նիցայում — մի հսկայական գործարան կա: Այդ գոր-  
ծարանն ամեն որ հազար տուփ պահածոներ ե պատ-  
րաստում: Ամեն որ գործարանը միս և կանաչեղեն  
են բերում, վորոնցից պատրաստում են պահածոներ  
և ուղարկում են յերկրամասի բոլոր կողմերը:

Կրիմսկայայում գտնվող պահածոյի գործարանը  
մեր յերկրում ամենամեծն եւ Այստեղ ամեն ինչ  
սկզբից մինչև վերջը մեքենաներն են անում: Մերե-  
նայի մեջ դրվում ե թիթեղի թերթը: Մեքենան թի-  
թեղը շերտ-շերտ կտրատում, վրորում ե այն և պատ-  
րաստում գեղեցիկ տուփեր: Մեքենան մեկ ժամում  
պատրաստում ե 300 տուփ:

Մեքենաները պահածոների տուփերը լցնում են  
պատրաստի կանաչեղենով և մսով ու ամուր փակում,  
վորպեսզի նրանց մեջ վոչ մի տեղից ոդ չմտնի: Հե-  
տո տուփերը դնում են տաք վառարանների մեջ: Այդ  
արվում ե նրա համար, վորպեսզի վոչնչանան բոլոր  
այն մանրեները, վորոնք սննդի փտում են առաջաց-  
նում: Իսկ յերբ տուփերը սառում են, նրանց վրա  
փակցնում են յառլիկները: Դրանից հետո պահածո-

ները պատրաստ են: Սրանց դարսում են արկղնե-  
րում:

Շոգեկառը պահածոները տանում ե հեռն, հե-  
ռու, և սրանք կարողեն ճանապարհորդել ամիսներ, և  
հետո քաղաքների բանվորները, ճանապարհորդները  
ոդաչուները, ծովալինները կարողանանում են յերկա-  
քիլանի բույսերից սուպ պատրաստել, պոմիդորով ներ-  
կել բորշչը, մուրաբայով թեյ խմել: Ճիշտ չե՞, Արշա-  
վիր, լավ բան են պահածոները:

\* \* \*

Այդ որվանից յես արծաթափույն տուփերից չեյի  
փախենում, վորոնք ինչպես ծուռ հայլի, ծրմուռ  
եյին իմ դեմքը:

Յես իմացա, վոր տուփերում ուտելիք ե պատ-  
րաստված, շատ համեղ ուտելիք, վորը յերկար ժա-  
մանակ պահպանվում ե:

## ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Ե ՏՈՒՆԸ

— Յերազումս յերկրաշարժ տեսա... Հողը սո-  
ղաց մի կողմ և ձևիքվածքի միջից մեծ դղրդոցով  
հրի և ծխի շատրվան ցայտեց:

Յես արթնացա:


Աչքերս ծակծկում եր առավոտյան արփին: Իսկ  
ականջներումս հնչում եր մի ինչ-վոր անսովոր աղ-  
մուկ:

Սկզբում ինձ թվաց, վոր յես դեռ բնած եմ: Բայց  
յես տեսա իմ սիբէրական թափամազ կատվին: Նա  
նստել եր պատուհանի գողին և լվացվում եր...

Բայց ինչը կարող եր այդպես աղմկել:

Յես պատուհանից դուրսնայեցի: Տեսա հրեշտացին մի

զագան և շարժվում այն ամայի տեղում, վորտեղ մենք խաղում ելինք: Գագանն ուներ լայն յերախ և յերկար վիզ: Նա կողքից-կողք եր որորվում, քանդում եր հողը յերկաթե ատամներով և կուլ չեր առալիս, այլ դուրս եր թքում: Փոշին ամայի նման բարձրանում եր հրեշի պրա:



Եքսկավատու

Յես վազեցի փողոց: Տեսնեմ մի մարդ նըստել ե գագանի թիկունքին: Մարզը սեղմում ե կոճակը — յերկաթե ատամները խրվում են հողի մեջ: Մեղմում ե յերկրորդը գագանը շարժվում ե մի կողմ: Նա սեղմում ե ատամները և հողի սև շերտերը դուրս են թափվում յերախից...

Յես զգուշությամբ մոտեցա ոյն տեղին, վորտեղ մեծ աղմուկով և դղբդոցով աշխատում եր հրեշ: Տեսա ընկերոջն՝ վախթանգին: Նա առանց վախենաւու կանգնել եր հրեշից քիչ հեռու:

— Վախթանգ, սա ի՞նչ հրաշք ե, — հարցրի յես:

— Աշխարհում վոչ մի հրաշք չկա, — պատասխանեց Վախթանգը: Դա եխկավատու ե:

— Դու նրանից չես վախենում:

— Թող եքսկավատորն ինձանից վախենա: Տեսնում ես, հայրս նրան ձիու նման ղեկավարում ե...

Յեկ իսկապես, մեքենան ղեկավարում եր Վախթանգի հայրը: Նա սեղմեց կոճակները, դարձրեց լծակ-ները:

— Այստեղ ի՞նչ պիտի լինի:

— Այստեղ պետք ե տուն կառուցվի: Մեծ հինգ-հարկանի տուն:

Տասս մեր տունն անվանում ե հավի վոտների վրա կանգնած խրճիթ: Նա թերվել ե կողքի և հենց են ե սկիտի վլվի: Իմ հայրը դեռ ցարի ժամանակներից ե փոխազրվել այս տունը:

— Հինգհարկանի տունը կառուցվում ե բանվորների համար, — ասաց Վախթանգը: Զեր ընտանիքն այդ փողորմելի խրճիթից կփոխազրվի լավ բնակարան: Հայրս տունը կառուցում ե իր ժամանակին: Նա հար-վածային ե:

\* \* \*

Մի քանի շաբաթից հետո եքսկավատորը վերջաց-ըեց իր աշխատանքը: Ամալի տեղում հիմքի համար փոսեր եյլն քանդված, Շինարարության համար բեր-վեցին նոր մեքենաներ, ցեմենտի տակառներ, յերկա-թի հաստ թիթեղներ, աղյուսի լեռներ, վարդագույն

արշալույսից մինչև մասիշակագույն աղջամուղջը բան-  
փորները համառորեն աշխատում եյին նրանք առաջ  
եյին տանում դործը: Տունը կառուցվում եր:

Ահա թե ինչ կար հիմա առաջի ամայի տեղում:  
Յես Վախթանգի հետ հաճախ եյի գալիս շինու-  
թյան տեղը: Նա ինձ բացարեց այն ամենը, ինչ ան-  
հասկանալի յեր... Յես հետեւմ եյի շինարարությանը  
սկզբից մինչև վերջ... Տունն աճում, բարձրանում եր  
իմ աչքերի առաջ:

\* \* \*

— Ահա, տեսնում ես, մեքենաներն աշխատում  
են, — ցույց տվեց Վախթանգը, — դա քարջարդիչ ե:  
Նրա մեջ զնում են քարի ամբողջ կաորներ և նա,  
ջարդում, մանրացնում ե: Քարջարդիչը մարդուց տասն  
անգամ ավելի արագ է ջարդում քարերը: Տեսնում  
ես, ահա այն մեքենան ել աղյուսներն ե վերև բարձ-  
րացնում: Ինչպես տեսնում ես, տունը կառուցում են  
վոչ միայն մարդիկ, այլև մեքենաները:

\* \* \*

Հետո յես նայում եյի, թե ինչպես են շարում պա-  
տերը, Քարտաշները բրեղենտե գոզնոցներով անցել  
են աշխատանքի: Նրանք շարում են աղյուսնե-  
րը, ամրացնելով ցեմենտով: Պատերն որստորե աճում  
են: Մկրտում յես նրանց վրա նայում եյի վերեից  
ներքև: Իսկ մի շաբաթից հետո յես գլուխս վերև  
եմ բարձրացնում, վորպեսզի տեսնեմ, թե վորտեղ են  
աշխատում քարտաշները:

Տունն աճում, բարձրանում եր: Իսկ ներքեւի հար-  
կերում տախտակամածում եյին հատակները, պատու-

հանին շրջանակներ եյին գնում, սվաղում-գաճում  
եյին:

\* \* \*

Յես մայրիկիս հետ մեկ ամսով գյուղ գնացի:  
Քաղաք վերադարձա և անմիջապես վաղեցի գեղի  
շենքը:

Վաղեցի — և աչքերիս չեյի հավասում: Բարձր, բար-  
ձը, համարյա ամպերին հասած, փայլում եր յերկա-  
թով ծածկված կտուրը:

Յես սկսեցի համրել հարկերը: Մեկ, յերկու, յերեք  
չորս, հինգ:

— Ինչպիսի՞ բարձր տուն ե:

Մանտյորները բարձր սանդուքիքների վրա ելեքտրա-  
կանություն եյին անցկացնում:

Ներքեռում, հատակի տակ, ջրմուղու աշխատակից-  
ները խողովակներ եյին անցկացնում: Տան բնակիչները  
կարիք չեն զգա գուլերով ջրի գնալ: Զուրն ինքը  
նրանց մոտ կգա:

Տունը ձմեռը տաք կլինի: Նա կտաքանա տաք  
գոլորշիով: Շենքի նկուղում տեղավորված կաթսայից  
գոլորշին խողովակներով կանցնի հինգհարկանի տան  
բոլոր սենյակները: Տունը կլինի լուսավոր, մաքուր,  
տաք և դյուրեկան:

\* \* \*

Քաղաքն ընդարձակվում է գեղի տափաստանը:  
Տարեց-տարի քաղաքը ընդարձակվում, մեծանում ե:

Իսկ տափաստանը նահանջում է հեռու և հեռու...  
Դեռ յերկար ժամանակ չե, ինչ հսկայական տան  
փոխարեն ամայի պարածություն եր, իսկ նրա հե-  
տեւում տափաստանը: Այստեղ այնպիսի խավար

դիշերներ եյին լինում, վոր նույն իսկ աչքերդ վոչինչ չեր տեսնում:

Քաղաքի ծայրամասում, փոքրիկ ծոված խրճիթում ապրում եր մեր ընտանիքը:

Դրսում անձրև—իսկ խրճիթում լիքը ջուր:

Իսկ հիմա մենք ապրում ենք նոր տան հինգերորդ հարկում: Մեր բնակարանում ամբողջ որն արև է լինում: Նրա մեջ ամեն ինչ կա: Պտտում ես ծորակը—սառը ջուր: Դարձնում ես փակիչը—սենյակը զիշեր ժամանակ լուսավորվում ե ցերեկվա պես:

Սենյակում տաք ե:

Մուր ու ծուխ չկա: Մայրիկն այլևս կարիք չի զգում վառարանը վառել:

Ճաշը բերում ենք ֆաբրիկ-խոհանոցից:

Խորհրդային յերկում բանվորները լավ են տպում:

## ԱՆԱՀԻՏ ՄՈՐԱԳՐՈՉ ՄԱՍԻՆ

Յես վազում եյի: Փողոցները նեղ-նեղ եյին, և ծուռ Յուրտ ե: Վերարկույիս տակ պահված ե թղթի մի ամբողջ կույտ: Յես գաղտնի կերպով թուղթը վերցը մեր գործարանից և տարա տպարան:

Տպարանում լրագրեր են տպում: Միայն այն տպարանը, վորտեղ յես տարա թղթերը, ընդհատակյա եր: Այստեղ տպում եյին բոլշեկյան լրագրեր և գրում եյին հեղափոխության մասին...

Այսպէս պատմում եր Անահիտ մորագրույրը հոկտեմբերիկների ողակի հավաքին: Հոկտեմբերիկները խիտ շըջան կազմեցին խարույկի շուրջը: Խարույկը մեծ եր, բոցերի լեզուներն ոձերի նման գալարվում և բարձրանում եյին բարձր-բարձր—մինչև յերկինք:

Հոկտեմբերիկները լսում եյին Անահիտ մորագրոջ պատմությունն այն մասին, թե ինչպես նա տուաջնեներում աշխատել ե թղթի գործարանում:

Ծանր եր աշխատելը: Ոյ, ինչպես դժվար եր: Պատհում եր, վոր տասնյերկու ժամ կանգնում եյինք մեքենայի մոտ:

Հետո Անահիտ մորագրույրը պատմում եր գործադուլի մասին: Թե ինչպես նա գործադուլային կոմիտեյի անդամ և յեղել և ինչպես բանվորները կապիտալիստների գեմ գործադուլներ եյին կազմակերպում: Հետաքրքիր ե, իսկ հետո հոկտեմբերիկներից բաժանվեց և նրանց հրավիրեց իր մոտ գործարան:

Արեստ պայծառ որերից մեկում բոլոր հոկտեմբերիկները հավաքվեցին, վոր գնան թղթի գործարան:

Գործարանի դռան տուաջ կանգնած եր հրացանով մի քեռի:

— Ուր եք գնում,—հարցրեց նա:

— Մենք,—պատասխանեցին հոկտեմբերիկները, գնում ենք Անահիտ մորագրոջ մոտ:

— Ի՞նչ Անահիտ մորագրոյի: Դուք ներս գնալու թույլավություն ունեք:

— Թույլավություն չունենք: Մենք հոկտեմբերիկներ ենք և ցանկանում ենք տեսնել ձեր գործարանը:

Քերին կարգադրեց մոտենալ փոքրիկ պատուհանին և թույլավություն ստանալ:

Յեվ ահա բոլորն ել գտնվում են գործարանում, գնում են ցեխից ցեխ: Կարգում են պատերի վրա փակցրած հայտարարությունները և լոգունգները, Յեխում մաքուր ե, ամեն տեղ կարգ ու կանոն, կարգապահություն:

Ահա և կարմիր տախտակը, վորտեղ գրված և լավագույն բանվոր-հարվածայինների անունները:

Կարմիր տախտակի վրա, կավճով շատ խոշոր  
տառերով գրված ե՝

Հարվածային տօնաւանքի համար կարմիր տախտա-  
կին և հանվում Անահիտ Միհայելյանը,

— Սա հենց Անահիտ մորաքույրն ե,—ուրա-  
խացած ասաց Եմմա Հովհաննիսյանը: Յեվ բոլոր հոկ-  
տեմբերիկները ուրախությունից վեր թուան:

— Անահիտ մորաքույր: Անահիտ մորաքույրը  
կարմիր տախտակին: Անահիտ մորաքույրը հարվա-  
ծային:

Անահիտ մորաքույրը բոլորից շուտ, աշխատանքի  
յե զալիս և նայում ե մեքենաները: Հետո ամեն ինչ  
պատրաստում ե աշխատանքի համար: Իսկ յերբ աշ-  
խատանքն ոկսվում ե, Անահիտ մորաքույրն աշ-  
խատում ե այնպես անել, վոր վոչ մի բոպե չկորչի:

— Անահիտ մորաքույրը ինքը լավ ե աշխա-  
տում և հետեւում ե, վորպեսզի ուրիշներն ել լավ  
աշխատեն:

— Ընկեր Սանդրոսյան, զու ինչու չես նայում,—  
գոռում ե Անահիտ մորաքույրը: Թղթերը կտրատ-  
վում են:

— Միքայել՝ Ալեքսանդրովիչ, —այս անդամ դի-  
մում ե նա արդեն մյուսին, —վերցրու պտուտակը,  
Ընկել ե:

Անահիտ մորաքույրը լավ, իմացող բանփորու-  
հի յե: Նա հոգ ե տանում, վորպեսզի գործարանը  
լավ աշխատի: Նա նույնպես հոգում ե, վորպեսզի  
բոլոր բանփորների յերեխաները սովորեն դպրոցում:  
Նա մեր դպրոցի դպրոցական խորհրդի անդամ ե:

Անա ինչպես լավն ե Անահիտ մորաքույրը:

## ԻՄ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Վիլին փոքր տղա յեր: Յես նրան առաջին ան-  
դամ տեսա մանկապարտեզում: Նա ձեռքերը ծալած-  
կանգնած եր գունատ ու տխուր: Վոսկեզույն գան-  
գուրները յերեւում եյին նրա գլխարկի տակից:

Մենք խաղում եյինք տափկենուկի: Բարձր ձայ-  
նով յերգում եյինք, ավագից ծեփում եյինք տներ,  
նավեր, սավանակիներ:

Վիլին չեր ուզում խաղալ: Նա տխուր, լուռ ու  
մունջ կանգնած եր:

Մենք իմացանք, թե ինչու յե արտում փոքրիկ  
Վիլին:

Նրա հայրիկը հեռավոր Գերմանիայում բանտարկ-  
ված ե: Նրա հայրիկը վոտքերին կրում ե ծանր շըդ-  
թաներ: Նրա հայրիկին ծեծում են ռետինե մտրակով:  
Կերակրում են միայն ջրով և հացով:

Գերմանիայում Վիլին սովամահ եր լինում: Կո-  
չիկ չունենալու պատճառով նա դպրոց չեր գնում:  
Նրա մայրիկին հազիվ հաջողվեց փախչել ֆաշիստ-  
ների յերկրից:

Վիլին իր մայրիկի հետ յեկալ ԽՍՀՄ—ազատ  
յերկիր:

Հիմա Վիլիի մայրիկն աշխատում ե խորհրդային  
գործարանում: Իսկ Վիլին հաճախում ե մեր մանկա-  
պարտեզը: Սկզբում Վիլին տխուր եր: Բայց որեցոր  
ուրախ եր դպրոնում: Նրա թշերն ել, մերի նման,  
սկսեցին կարմրել:

Վիլին սկսեց ավագից խաղալիքներ ծեփել, յեր-  
գել և տափկենուկի խաղալ: Վիլին հատկապես սի-  
րում եր ծեփել: Ավագից նա հաստ վոստիկան եր շի-  
նում: Նա վոստիկանին շինում եր նրա համար, վոր

Հուրը նետի: Նա սիրում եր տեսնել, թե վոստիկանն ինչպես ե խեղդվում: Մեր յերգելու ժամանակ վիլին ուղղակի խլում եր մեր խոսքերը: Նա լավ հիշողություն ուներ: Յերեք ամսից հետո նա մեր յերգերն անզիր զիտեր և կարող եր մեզ հետ ոռուսերեն խոսել:

Մեկ անգամ յես և Վիլին խաղում եյինք ավազի վրա: Յես ծեփեցի մեծ պատուհաններով և պատշգամբներով գեղեցիկ տուն:

Իսկ Վիլին ծեփեց նեղ պատուհաններով և ծռված պատերով փոքրիկ խրճիթ:

— Դու ի՞նչ ես շինել, — հարցը յես:

— Տուն ե, վորտեղ յես Գերմանիայում ապրում եյի, — պատասխանեց նա:

Վիլին պատմեց իր տնակի մասին: Նա գտնվում է Գերմանիայում: Տնակը գտնվում է Բեռլինի աղքատ թաղամասում: Ողն այնտեղ համարյա միշտ թունավորված ե ծխով և մրով՝ շուրջը գտնվող գործարանների պատճառով: Հայրն աշխատանքից վերադառնում եր տուն և անկողին եր մտնում: Ամառ ժամանակ բնակարանում այնպես շոգ եր անում, ինչպես անապատում: Չմեռը ցուրտ — ինչպես սառույցների վրա:

— Ահա Վիլիի ապրած տունն ինչպիսին եր:

Յես Վիլիին տարա իմ բնակարանը, բնակարանս փողողված եր արևով: Թվում եր, թե վոչ մի անկյուն չկա ճառագայթներով չլցված, վորոնք լայն պատուհանների միջով թափանցում եյին սենյակը:

Յես Վիլիին տարա պատշգամբը, Պատշգամբը թաղված եր ծաղիկների մեջ: Ծաղիկները բարձրության վրա իրենց շատ լավ եյին զգում: Ծաղիկները գանվում եյին հողով լցված թաղարներում: Ո՞հ, ինչ-

պես լավ ե պատշգամբում հանգստանալ: Կանաչներով պատած ծածկոցը պատշգամբին զովություն ե տալիս:

Մենք Վիլիի հետ պատշգամբից նայեցինք փողոցը Փողոցում ամեն ինչ փոքր եր յերևում:

— Ելքարոքարը և ավտոմոբիլը խաղալիքի յեւ նման, — ասաց Վիլին: Ճիշտ չե՞ արդյոք:

— Յեկ մարդիկ շատ փոքր են:

Պատշգամբում քիչ մնալուց հետո գնացինք սենյակը: Սենյակը մաքուր եր և գեղեցիկ Նստեցինք բազկաթոռի վրա:

— Ուզում ես ռադիո լսել:

— Ուզում եմ:

Յես յերկաններ (վիլկա) մացը խրանոցի (շտեպսելի) մեջ և բարձրախոսից լսեց նվազախմբի ձայնը: Յերաժշտությունը շատ գեղեցիկ եր: Նվազախումբը մեր քաղաքից նվազում եր հեռու, հեռու: Նվազախումբը նվազում եր Լենինգրադում:

Հետո յես Վիլիին տարա իմ սեփական մանկական սենյակը: Նրան ցույց տվեցի, թե յես ինչպիսի խաղալիքներ, պատկերազարդ գրքեր և գունավոր մատիտներ ունեմ:

Զանդը հնչեց, հայրիկը վերադարձավ աշխատանքից: Նա աշխատում եր Միկոյանի անվան գործարանում: Գեղեցիկ կոշիկներ եր պատրաստում:

Հայրիկը վերցրեց յերեսսրբիչը և գնաց լողարանը, լողարանում ցանկացած բովելին կարելի յե այնպես անել, վոր անձրև գա: Պատիր ծորակը և շուրը խողովակից ծակոտիկների միջոցով անձրևի նման կը թափվի:

Հայրիկը լվացվեց և ճաշեց: Ճաշելուց հետո գուրս յեկավ պատշգամբը և պառկեց փափուկ մահճակալի վրա:

— Զարություն չանեք, — խնդրեց հայրիկը, — ինձ համար մեռյալ ժամ ե:

— Խորհրդային յերկրում բանվորները լավ են ապրում, — ասաց Վիլին:

— Այս, մեր տանն ապրում են բանվոր-կոշկականեր. բոլորն ել լավ են ապրում: Խորհրդային իշխանությունը բանվորների կյանքի համար շատ ե հոգ տանում: Նա բանվորներին լավ բնակարաններ ե հատկացնում:

— Դուք լավ եք ապրում, — ասաց Վիլին գնալուց առաջ: Գերմանիայում բանվորներն այսպես չեն ապրում: Բայց նրանք ել այսպես կապրեն: Նրանք ել այսպիսի կյանքի հճամանեն:

## ՖԱԼԱՔԸ ԿԱՆԱՉ ՈՂԱԿՈՒՄ

Նստեցեք ավտոմոբիլ: Մի շտապեք, բոլոր կարգացողների համար ել տեղեր կլինեն:

— Ու-ու, ու, ու-ու, — կանչում ե շչակը: Շոփերը սեղմում ե լծակը և ավտոմոբիլը սլանում ե առաջ: Նայեցեք պատուհանից և ձեզ կթվա, վոր փողոցում փազում են տները, հեռագրական լարերը և լրագրավաճառային կիոսկները: Զգախենաք: Այդ միայն թվում ե:

Քաղաքը մնաց մեր հետեւում: Պատուհանից յերեւում ե լայնարձակ տափաստանը:

Նա նման ե կանաչ ծովի, վորի վրա՝ փարոսի պես՝ փայլում ե արևը:

— Մենք ուր ենք գնում: Գուցե մեղ տանում են տափաստանը, վորպեսզի այնտեղ թողնեն: Չե վոր մենք կարող ենք ճանապարհը կորցնել:

— Մի անհանգստացեք, մենք գնում ենք քաղաքի շուրջը զբոսանքի: Դուք միանգամից յերկու բավակա-

նություն կստանաք՝ կզարճանաք և պատմություն կլսեք:

Ավտոմոբիլի անիմերի տակից ամպի նման փոշի յեր բարձրանում: Մեքենան սլանում եր քաղաքի շուրջը: Քաղաքը շրջապատված եր կանաչ ողակով: Մենք անցնում ենք կարմիր խնձորներով, ծիրաններով, բալերով և յելակներով լիքը այգիների մոտից:

Զախից գտնվում եր հյութալի պոմիդորներով, թարմ վարունգներով բանջարանոցը: Տեսնում եք յոթանասուն հագուստ, բոլորն ել առանց կապիչների: Այդ բնչ ե:

Այդ կաղամբ ե: Նրանք ինչպես շատ են: Միլունավոր բաժին բորշչերի համար կբավականացնի:

Իսկ ահա այնտեղ, տոշենում, աճում ե բաղուկը, գաղարը, կարտոֆիլը, սիմինդը:

Այդ մերձքաղաքային տնտեսությունն ե: Այս դաշտերից են առաջ գալիս հոտավետ սուլպը, կարտոֆիլի պլուրեն, խաշած սիմինդը, քաղցր մրգաչուրը: Հարյուրավոր պարտիզապաններ և այգեպաններ մեծ աշխատանք են թափում մերձքաղաքային անտեսությունում: Վորքան նրանք այդտեղ լավ աշխատեն, այնքան բանվորների կերակուրը սննդարար կլինի: Իսկ վորքան սնունդը լավ լինի, այնքան ել գործարաններում բանվորները մեծ ինունդով կաշխատին:

Յուրաքանչյուր խոշոր գործարան ունի իր բանջարանոցները, պարտեզներն ու այգիները: Այստեղից ստացած բանջարեղենը և մրգեղենը ուղարկվում են բանվորական կոոպերատիվները և ճաշարանները:

Ահա ձեզ Սելմաշի մերձքաղաքային տնտեսությունը: Նա այնքան հսկայական ե, վոր աչքով մի ծայրից մյուսը՝ միանգամից չեն տեսնի: Իսկ հեռվում նշմարվում ե միկոյանցիների, կարմիր աքսայցիների, յերկաթուղայինների դաշտերը:

Ավտոմոբիլը թռչում եր ամեն տեղ՝ Նրանից առաջացած փոշին փռվում եր տափաստանի վրա. Հանկարծ մեքենան կանգնեց. Զուրը յեռացել, վերջացել եր ռադիոտրում. Մեքենայի սիրտը շատ եր տաքացել: Հարկավոր եր սառը ջրով զովացնել: Զուրը հեռու չեր: Մոտ եր ջրհորը:

Պարտիզանները հյուրասեր մարդիկ են: Նրանք  
աղբյուրի ջրով կշացըին վոչ միայն ավտոմոբիլը,  
այլ նաև մեզ:

— Հարգաբաժանն եւ մեր աշխատանքը,—ասում ելին  
պարակպահները, յերբ մենք նայում ենք, թէ ինչպես  
կուլտիվատորներն արմատահան են անում մոլախո-  
տերը. Կերպակըում ենք ամբողջ քաղաքը:

Ավտոմոբիլը ալացավ առաջ՝ կանաչ ողակը չփեր-  
ջացավ. Քաղաքի շուրջը փոված եյին դաշտերը, վոր-  
տեղից բանվորների համար ստացվում եր համեղ կա-  
նաչեղեն և մրգեղեն:

Ավտոմոբիլը դուրս յեկավ կանաչ ծովից: Ելի մեր  
աչքերի առջևից վազում են տները, հեռագրալարերը,  
լրագրավաճառային կիոսկները: Զվախենաք: Այդ մի-  
ահն թվում ե: Մեքենան ամեն մի կարդացողի կտանի  
իրենց տները: Կարող եք տուն գնալ: Գրունելուց հե-  
տո ձեր ախորժակը բացվել ե: Տանը ձեզ սպասում ե  
ֆարբիկ-խոնանոցից բերած ճաշը: Նա պատրաստ-  
ված ե մերձաղաքային տնտեսության կանաչեղենից:



## «Ազգային գրադարան»



NL0147646

ԳԻՆԸ  
Цена 45 ԿՈՊ.  
Կոպ.

41668

16637

ՄՔ2

ՁՄՎ

На армянском языке

Л. ШТОКГАММЕР, Д. ГЕУХЕРОВ

В Г О Р О Д Е

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳՈՅՆՑ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՒՆ ՄՊԱԿԱԿԱՑԱՆ ՓՈԼ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԱԿՈՑԵՆՏՐ)